# «ԱրՊՀ-2022» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՃԱՄԲԱՐ. ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

*Օգոստոսի 10-ին ավարտվեց Արցախի պետական համալսարանի կողմից Պատարա գյուղի մերձակայքում կազմակերպած ուսանողական միջազգային վրանային ճամբարը, որը մեկնարկել էր օգոստոսի 1-ին: Փակման հանդիսավոր արարողությանը ներկա էին Արցախի Հանրապետության պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պաշտոնատար անձինք, դասախոսներ և ուսանողներ:*



Միջոցառումը մեկնարկել է լռության րոպեով՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների:

Ճամբարին մասնակցություն են ունեցել 100 ուսանողներ Արցախի, ՀՀ և արտերկրի բուհերից: Վրանային ճամբարի ընթացքում բնության գրկում 10 օրերի ընթացքում ապահովվել է ուսանողների ակտիվ ժամանցը, նրանց միջև ամրապնդվել միջբուհական կապը, ճամբարականների համար կազմակերպվել են պաշտոնական հանդիպումներ, ինտելեկտուալ-տրամաբանական խաղեր, բանավեճեր, սպորտային, մշակութային միջոցառումներ, պատմաճանաչողական այցեր, այցելություն զորամաս, կրակային պատրաստության դասընթաց, իսկ երեկոյան ազատ ժամանցն ուղեկցվել է խարույկի շուրջ հետաքրքիր քննարկումներով:

Փակման արարողությանը ուսանողներին ողջունել և ճամբարի միջոցով երիտասարդության միասնականության ապահովումը կարևորել է ԱՀ պետնախարար, ԱրՊՀ խորհրդի նախագահ Ա. Բեգլարյանը. «Այն գաղափարներն ու արժեքները, որոնք դուք ստանում եք ճամբարում և բուհական կյանքում, չմոռանաք, և հասկանանք, որ մեր ընկերների զոհաբերության նպատակի համար մենք պարտավոր ենք ապրել: Շատ ուրախ եմ, որ այս ճամբարի ձևաչափով Մայր Հայաստանից էլ ամեն տարի ունենում ենք մասնակիցներ»-նշել է Ա. Բեգլարյանը:

ՀՀ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ուսանող Մելանյա Հովհաննիսյանը ճամբարի մասնակիցներից է, ով առաջին անգամ է Արցախում. «Ես երբևէ չեմ եղել Արցախում, բայց միշտ երազել եմ: Այժմ ճամբարի շնորհիվ Արցախում եմ: Շրջագայելով Արցախում՝ հասկացա, որ իմ պատմական հայրենիքում եմ: Ճամբարական 10 օրերն անմոռանալի էին, որի ընթացքում ձեռք բերեցինք լավ ընկերներ: Շնորհակալություն եմ հայտնում ԱրՊՀ-ին, ճամբարի կազմակերպիչներին»:

Ամփոփելով 10-օրյա ճամբարի արդյունքները՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել ճամբարի կայացման աջակիցներին. «Հայրենիքի գաղափարն այս օրհասական պահին առաջին պլան է եկել. հայրենիքի, երիտասարդության միջոցով փոփոխություններով առաջընթացի և միասնության գաղափարներն են այն առաջնահերթությունները, որոնց միտված էր ԱրՊՀ ճամբարի նպատակը: Մենք միասին կարողացանք հաղթահարել այս օրերի դժվարությունները՝ հասնելով եզրագծին և այսօր կարող ենք ասել, որ մեր ճամբարը հաջողությամբ կայացել է, ուստի այն իրավունք ունի հաջորդ տարի ևս շարունակվելու»,-նշել է Վ.Յարամիշյանը:

Փակման արարողությանը ճամբարականները հանդես են եկել երաժշտական, պարային կատարումներով, ասմունքով և հումորային համարներով:




| | | | |
|---|---|---|---|
| «ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ<br>*Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*<br>Հրատարակվում է 1994 թվականից | Խմբագիր՝ Ջ. Սառաջյան<br>Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:<br>Հեռ՝ (047) 94 04 91 | Տպաքանակ՝ 400<br>Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում | Իմացի՛ր քո համալսարանի մասին:<br>Այցելի՛ր asu.am կայք:<br>www.asu.am |



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



№ 05(242)
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН» *հունիս-օգոստոս-2022*


# ՀՐԱԺԵՇՏ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱրՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

***2021-2022 ուտարում Արցախի պետական համալսարանը թողարկեց առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի 356 և մագիստրատուրայի՝ 145 շրջանավարտ: Շրջանավարտների դիպլոմների շնորհման հանդիսավոր արարողությունները, ըստ ֆակուլտետների, տեղի ունեցան ԱրՊՀ պուրակում՝ զոհված ուսանող-ազատամարտիկների հուշակոթողի մոտ:***



Շրջանավարտների հրաժեշտի եզրափակիչ արարողությունը տեղի ունեցավ հունիսի 17-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության դահլիճում, որին ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱՀ օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը:

Միջոցառումը մեկնարկեց լռության րոպեով՝ ի հիշատակ հանուն հայրենիքի պաշտպանության պատերազմներում անմահացած քաջորդիների:

ԱրՊՀ շրջանավարտներին բուհն ավարտելու առթիվ շնորհավորել և իր բարեմաղթանքն է հղել ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը:

«Այսօր, երբ վտանգված է մեր ազգային ինքնությունը, անչափ կարևոր է պահպանել մեր արժեհամակարգը, իսկ այն կարող ենք անել ազգային ու պետական շահերին համահունչ սերնդակրթություն ապահովելով, մեր բարոյական ու հոգևոր նորմերը պահպանելով: Մեր ազգային ինքնության պահպանման ճանապարհին մեծագույն հաջողություններ եմ մաղթում մեր շրջանավարտներին»,-նշել է նախարարը:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, խոսել է համալսարանի այս ուստարվա շրջանավարտների բուհական կրթության ժամանակաշրջանում համալսարանի դժվարությունների մասին՝ պայմանավորված համավարակով, գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքների հետ կապված շենքային սուղ պայմաններով, պատերազմով, ընդգծել բուհի արձանագրած հաջողությունները՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում, հիմնանորոգված շենք, ուսումնագիտական առաջընթաց՝ կարևորելով ԱրՊՀ-ի դերն ու նշանակությունը՝ որպես Արցախի մայր բուհ և շեշտադրել այն՝ երկրի համար բարձրորակ մասնագետներ թողարկելու ու հիմնական կադրային բազա ապահովող կրթական հաստատություն լինելու տեսանկյունից:

➥ 2

1 ➥ «Արցախի մայր բուհը 53 տարվա պատմություն ունի, որի ընթացքում բուհը թողարկել է շուրջ 25 000 շրջանավարտ: Այսօր նրանց շարքը լրացվում է ևս 500-ով: Որտեղ էլ լինեք, երբեք չմոռանաք Արցախը, ԱրՊՀ-ն: Ինչ պաշտոններ էլ զբաղեցնեք, երբեք չթերագնահատեք Ձեր նախորդների կատարածը: Երբ ինձ հարցնում են, թե որն է մեր հաջողության գրավականը, ես միշտ պատասխանում եմ, որ ԱրՊՀ ռեկտորատը իր որոշումները միշտ կայացնում է՝ հենվելով նախորդ ռեկտորների կատարած աշխատանքի վրա»,-նշել է ռեկտորը:



Շրջանավարտ Պարույր Մարտիրոսյանը, շնորհավորելով շրջանավարտներին, շնորհակալական խոսք է հղել համալսարանին. «Համալսարանի ղեկավար մարմինները, բոլոր պատասխանատու ստորաբաժանումները բարձր պատասխանատվությամբ ու որակով են կատարել իրենց բաժին առաքելությունը: Ամեն կերպ փորձ է արվել հաղթահարել բոլոր փորձությունները ու չեզոքացնել ցանկացած բացասական ազդեցություն, որոնք ի հայտ եկան նախ համավարակի, այնուհետև՝ պատերազմի հետևանքով: Մեզանից յուրաքանչյուրը պիտի ստանձնի իր մասնագիտական բաժնի պատասխանատվությունը և սա է ամենակարևորը: Հավատում եմ, որ այսուհետ ևս մենք կկարողանանք միասնական ուժերով հաղթահարել բոլոր փորձությունները»:

Մագիստրատուրայի շրջանավարտ Արմինե Պետրոսյանը հիշում է՝ ընդունվելով մագիստրատուրա, սկսվեց 2020-ի պատերազմը, անգամ չհասցրին ծանոթանալ դասախոսների հետ: Այսօր արդեն ավարտում են, բայց անելիքի մեծ բեռով, միաժամանակ՝ մեծ կամքով ու պատրաստակամությամբ՝ ծառայելու հայրենիքին ու ու ժողովրդին:

«Այսօր մեր կողքին, մեր շարքերում նաև մեր զոհված ընկերները պիտի լինեին: Տղաներ, որոնք ուսանողական անհոգ օրերը ետևում թողած, մեծ կյանք պիտի մտնեին նոր երազանքներով: Բայց նրանք գիտակցաբար ընտրեցին անմահությունը, ինչպես միշտ:

Ինչպես միշտ ուսանողներն էին պայքարի առաջամարտիկները: Հիշենք՝ 88-ին հենց ուսանողական շարժումից թափ առավ մեր ազատագրական պայքարը: Ու մենք արժանի հետնորդը պիտի լինենք այն սերունդների, որոնք 3 տասնամյակում 3 անգամ կենաց-մահու կռիվ տվեցին՝ հանուն մեզ, հանուն մեր հայրենիքի, հանուն արժանապատիվ խաղաղության: Իսկ մենք դեռ անելիք ունենք՝ հանուն նրանց մեր նահատակ պապերի ու եղբայրների, հանուն անցյալի ու հանուն պայծառ ապագայի»,-նշել է Արմինե Պետրոսյանը՝ շնորհակալություն հայտնելով բուհի պրոֆեսորադասախոսական կազմին և շնորհավորելով բոլոր շրջանավարտներին:

Միջոցառման ընթացքում հնչել են ասմունք, երաժշտական կատարումներ, պարային համարներ, որոնք կազմակերպվել են ԱրՊՀ ՈՒՀՏՍ և կարիերայի բաժնի, ուսանողության ուժերով՝ ընդգրկելով նաև հանրապետության մշակութային համույթներին:





# «ԱրՊՀ-2022» ԱՄԱՌԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ- ՃԱՄԲԱՐ. ԲԱՑՈՒՄ



***Օգոստոսի 2-ի երեկոյան Արցախի Պատարա համայնքի մերձակայքում գտնվող ԱրՊՀ տարածքում տեղի է ունեցել օգոստոսի 1-ից 10-ը կազմակերպվող ԱրՊՀ ամառային միջազգային դպրոց- ճամբարի պաշտոնական բացումը, որին մասնակցել են 100 ուսանողներ Արցախի, ՀՀ և արտերկրի բուհերից: Բացման արարողությանը ներկա էին ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, հյուրեր, ճամբարականներ:***

Բացման արարողությունը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ ճամբարի նպատակն է ամրապնդել միջբուհական համագործակցությունը, ուսանողների ամառային հանգիստը կազմակերպել արդյունավետ, ուսուցողական ծրագրերով, և տարեցտարի ճամբարին մասնակցել ցանկացողների թվի աճը վկայում է, որ նպատակն արդարացված է:

«Այն համերաշխությունն ու փոխգործակցային հարաբերությունները ճամբարին մասնակից տարբեր բուհերի ուսանողների միջև, որ ստեղծվում ու շարունակվում է յուրաքանչյուր տարի ճամբարի մասնակիցների միջև, ողջունելի և ընդօրինակման արժանի է: Եվ ձեզնից յուրաքանչյուրը ցանկացած գործ ձեռնարկելիս, ցանկացած քայլ կատարելիս թող հիշի, որ այսօր մենք ինչ անում ենք, ինչպիսի ծրագիր իրականացնում ենք, մեր լույս տղաների շնորհիվ է, հավերժ փառք և խոնարհում նրանց հիշատակին: ԱրՊՀ զոհված ուսանողների հիշատակին ճամբարի տարածքում կառուցվել է հուշաղբյուր, որը ևս մեր բոլորիս հարգանքի և խոնարհումի հավաստիքն է»,-նշել է ռեկտորը՝ շնորհակալություն հայտնելով նաև ճամբարի աշխատանքներում ընդգրկված աշխատակիցներին ու ուսանողներին, գործընկեր բուհերին ու ճամբարականներին:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը ևս ողջունել և արդյունավետ ու բովանդակալից օրեր է մաղթել ճամբարականներին՝ կարևորելով ճամբարի միջոցով հայրենաճանաչողություն, ազգային-պետական շահերին համահունչ սերնդակրթություն ապահովելու, բարոյական ու ազգային նորմերը պահպանելու անհրաժեշտությունը և ի դեմս երիտասարդության՝ կարողանալ բարձր պահել Արցախի անունը և տերը լինել Արցախի:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանող Արման Այվազյանն Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից է, Արցախում էր՝ ճամբարին մասնակցելու նպատակով:

«Իմ ու Արցախի նախորդ հանդիպումը պատերազմի դժվար օրերին էր, բայց չեմ ուզում ջնջել իմ այդ հիշողությունները, որովհետև ինձ համար Արցախը հայրենիքիս մի մասնիկն է: Կարևորելով նմանատիպ միջոցառումները և ուսանողների ներգրավումը՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել ճամբարի կազմակերպիչներին»,-նշել է Արման Այվազյանը:

ԱրՊՀ ՈՒՀՏՍ և կարիերայի բաժնի աշխատակից Լիլիթ Մարգարյանի խոսքով՝ համալսարանականներն ամեն ինչ արել են, որպեսզի ճամբարի աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպեն. «10-օրյա ճամբարի ընթացում մեր ամեն մի օրը հագեցած է լինելու տարաբնույթ միջոցառումներով՝ ժամանցային, սպորտային խաղեր, դասընթացներ, հանդիպում-քննարկումներ, արշավներ, այցելություն զորամաս. ըստ այդմ էլ առանձնացրել ենք օրեր՝ առաջին օրը ծանոթության օրն է, 2-րդ օրը ճամբարի բացման հանդիսավոր արարողությունն է լինելու, հաջորդիվ՝ ուսումնակրթական, ռազմահայրենասիրական, մարզատեխնիկական, հայրենաճանաչողական, վերջին օրը ազգային-մշակութային օր՝ ճամբարի փակման արարողություն, ազգային խաղեր, երգեր, պարեր, ազգային կերակրատեսակների պատրաստում»:

«Ճամբարը դրական արձագանք է գտել ոչ միայն ԱՀ, այլ նաև ՀՀ բուհերի ուսանողների շրջանում, ինչի վկայությունն է տարբեր բուհերի ուսանողների մասնակցությունը ճամբարին, և արդեն 4-րդ տարին է, և ամեն տարի դիմորդներն ավելի մեծ թիվ են կազմում: Սա ոգևորիչ ու պարտավորեցնող փաստ է մեր կազմակերպչական թիմի համար»,-նշել է ԱրՊՀ ՈՒՀՏՍ և կարիերայի բաժնի պետ Վահե Գալոյանը:

Բացման արարողությանը ճամբարականները հանդես են եկել ասմունքով, երաժշտական կատարումներով, ցուցադրվել է տեսանյութ՝ ճամբարային առօրյայի մասին պատմող:

# ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ԵՆ ՇՆՈՐՀՎԵԼ ԱրՊՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ




*Հունիսի 28-ին տեղի ունեցավ ԱրՊՀ իրավաբանական կլինիկայում դասընթացն ավարտած ուսանողների հավաստագրերի շնորհման արարողությունը: Ներկա էին ԱրՊՀ ՈւՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, իրավունքի ամբիոնի վարիչ Տաթև Գևորգյանը, կլինիկայի համակարգող Լիանա Մայիլյանը և կլինիկայի փաստաբան Աշոտ Ապրեսյանը, ովքեր շնորհավորել են ուսանողներին դասընթացը հաջողությամբ ավարտելու առթիվ՝ մաղթելով նրանց կլինիկայում ստացած պրակտիկ գիտելիքները հաջողությամբ ծառայեցնել իրենց մասնագիտությանը, միշտ վեր դասել մարդկային բարձր արժեքները և գործել ու արարել հայրենիքում՝ խաղաղ երկնքի ներքո:*

«Հավաստագրերը տրվել են Ամերիկայի հայ փաստաբանների միության կողմից: Հատուկ շնորհակալություն նրանց՝ մշտապես իրավաբանական կլինիկայի կողքին լինելու և մեր ուսանողներին աջակցելու համար»,-նշել է Տ.Գևորգյանը:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ

*Հունիսի 21-23-ը Արցախի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի պատվիրակությունը աշխատանքային այցով ՀՀ-ում էր: Պատվիրակության կազմում էին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթև Գևորգյանը, իրավաբանական կլինիկայի համակարգող Լիանա Մայիլյանը և կլինիկայի փաստաբան Աշոտ Ապրեսյանը:*



Այցի ընթացքում կլինիկայի մասնագետները հանդիպում են ունեցել Ամերիկայի հայ փաստաբանների միության ներկայացուցիչների հետ: Միության հովանավորությամբ արդեն հինգ տարի է՝ գործում է ԱրՊՀ իրավաբանական կլինիկան և անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերում դրա անհրաժեշտությունն ունեցող անվճարունակ քաղաքացիներին, նպաստում «Իրավագիտություն» կրթական ծրագրով սովորող ուսանողների գործնական հմտությունների և մասնագիտական փորձի ձեռքբերմանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Ամերիկայի հայ իրավաբանների միության և ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի հետագա համագործակցության հարցեր: Կլինիկայի աշխատակիցները ներկայացրել են  իրականացված աշխատանքներն ու ձեռքբերումները: Պայմանավորվածություն է ձեռքբերվել խնդիրների արդյունավետ լուծման ուղիների և առցանց դասախոսությունների շարք մեկնարկելու վերաբերյալ: ԱՄՆ հայ իրավաբանների կողմից անցկացվող դասախոսությունները միտված կլինեն ուսանողների տեսական և գործնական հմտությունների զարգացմանը:

«Հայ իրավաբանների միության ներկայացուցիչների հետ մեր հանդիպումը շատ արդյունավետ էր, քանի որ այդ ընթացքում ոչ միայն խոսեցինք կլինիկայի գործունեության մասին, այլև՝ հետագայում համագործակցությունն ավելի ամրապնդելու:

ԱրՊՀ պատվիրակության անունից շնորհակալություն ենք հայտնում կազմակերպիչներին և ԱրՊՀ ռեկտորին՝ նման հնարավորություն ընձեռելու համար»,- նշել է Տաթև Գևորգյանը:



# ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ



*Հունիսի 30-ին տեղի է ունեցել Արցախի պետական համալսարանի 2021-2022 ուստարվա տարեվերջյան գիտխորհրդի նիստը, որը վարում էր ռեկտոր Արմեն Սարգսյանը: Նիստը մեկնարկել է պարգևատրման արարողությամբ:*

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս Զինաիդա Բալայանը պարգևատրվել է «ԱրՊՀ 50-ամյակ» հուշամեդալով՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոկտորի գիտական աստիճան ստանալու և ԱրՊՀ-ում ունեցած երկարամյա վաստակի համար:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է Զ.Բալայանին՝ ընդգծելով նրա երկարամյա գործունեությունը բուհում:

Զինաիդա Բալայանն իր հերթին շնորհակալություն է հայտնել ռեկտորին ու նիստի անդամներին. «Մեծ խիզախում էր երեք պատերազմների ընթացքում ուսումնասիրություն կատարել և հրատարակել «Արցախը 19-րդ դարի գրականության մեջ» աշխատությունը: Հպարտ եմ, որ կարողացել եմ մայր բուհին իմ նպաստը բերել: Այս պարգևն ու իմ հաջողությունը համարում եմ Արցախ աշխարհինը»:

Օրակարգի առաջին հարցը 2021-2022 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին էր: Հարցը ներկայացրել է ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը: Պրոռեկտորի խոսքով՝ ընդհանուր առմամբ ամփոփիչ ատեստավորման բոլոր քննությունները անց են կացվել կազմակերպված, առանց որևէ արտառոց դեպքերի:

«Նշեմ նաև, որ այս անգամ մեզ հաջողվեց բոլոր հանձնաժողովների նախագահներին նախապես ծանոթացնել ավարտական աշխատանքներին և մագիստրոսական թեզերին, ինչպես նաև քննական հարցաշարերին: Բացի դրանից, կիրառվել է նաև գնահատման նոր մեթոդաբանություն, որը թույլ տվեց ավելի օբյեկտիվ գնահատել աշխատանքները: Գնահատականներից բողոքողներ չեն եղել»,- նշել է Գ. Սահակյանը՝ հավելելով, որ հանձնաժողովների նախագահները ընդհանուր առմամբ գոհունակություն են հայտնել առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերաբերյալ, ինչը չի կարող ասել հեռակա ուսուցման համակարգի մասին:

Գ. Սահակյանը նիստին ներկայացրել է նաև ամփոփ տեղեկատվություն 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:Օրակարգի հաջորդ հարցերով նիստը հաստատել է 2022-2026 ուսումնական տարվա բակալավրիատի առկա ուսուցման, 2022-2024 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման, 2022-2027 ուսումնական տարվա բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգերի կրթական ծրագրերը (հարցը ներկայացնող՝ Գ.Սահակյան), մասնագիտության կրթական ծրագրի ղեկավարման կարգը (հարցը ներկայացնող՝ Շ.Այդինյան, Շ.Սաղյան), տպագրության են երաշխավորվել մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Օրակարգային հարցերից էր նաև ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի, ռուսաց լեզվի և գրականության, մանկավարժության և հոգեբանության ամբիոնների դոցենտների ընտրությունն ու արդյունքների հաստատումը:

Ընտրությունների արդյունքներով ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնում վերընտրվել է տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանը, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ՝ մ.գ.թ. Ինգա Հակոբյանը, մանկավարժության և հոգեբանության՝ մ.գ.թ. Արմինե Բաղդասարյանը:

Այլ հարցերում գիտխորհուրդը քվեարկել և հաստատել է ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Նոնա Դավթյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու հարցը:

# ԱրՊՀ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԵՆ ԱՆՑԵԼ ՀԱՀ-ՈՒՄ



*Օգոստոսի 8-ից 12-ը Արցախի պետական համալսարանի աշխատակիցները վերապատրաստման դասընթացներ են անցել Հայաստանի ամերիկյան համալսարանում:*

Դասընթացի նպատակն էր կատարելագործել գրադարանի աշխատակիցների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, յուրացնել ոլորտի նորարարությունները:

Վերապատրաստման դասընթացները վարել են բնագավառի առաջատար մասնագետները: Ծրագրի շրջանակներում մասնակիցները հմտացել են «Koha» գրադարանային կառավարման համակարգով աշխատելու ուղղությամբ՝ գրադարանային ռեսուրսների ֆիզիկապես և առցանց շրջանառում, գրացուցակագրում, մատենագիտական գրառումների ստեղծում «Koha» համակարգի միջոցով և այլն:

Համալսարանականները դասընթացն անցել են Հայաստանի ամերիկյան համալսարանում, ծրագրի շրջանակում ՀԱՀ նախաձեռնությամբ նրանք եղել են նաև ՀՀ Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Ծրագրի մասնակիցները լսել են ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան «Վիքիմեդիա Հայաստան» խորհրդի նախագահ Տիգրան Զարգարյանի դասախոսությունը՝ առաջատար գիտական հրատարակիչների «Բաց կրթական էլեկտրոնային ռեսուրսներ» և «Բաց մատչելիություն հարթակներ» թեմաներով, ՀԱՀ-ի աշխատակից Հասմիկ Գալստյանին՝ «Միջգրադարանային շրջանառություն Հայաստանի բուհական գրադարանների միջև» թեմայով, digilib.aua.am կայքի հիմնադիր Հովհաննես Կիզողյանին՝ «Հայ մատենագրության թվանշային գրադարանի և ինստիտուցիոնալ էլեկտրոնային պահոցի կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

ԱրՊՀ գրադարանը ՀԱՀ կողմից նվիրատվություն է ստացել ՀԱՀ հրատարակած գրքերից, իսկ Տիգրան Զարգարյանը ԱրՊՀ-ին ՀՀ ԳԱԱ կողմից նվիրել է «Հայ գիրքը Թուրքիայում» գրքի Ա պրակը:

Դասընթացի ավարտին ԱրՊՀ գրադարանի աշխատակիցներին ՀԱՀ կողմից տրվել են հավաստագրեր՝ հավաստիացնելով, որ ծրագիրը կլինի շարունակական:

ԱրՊՀ գիտական գրադարանի աշխատակիցները գոհունակություն են հայտնել ծրագրի արդյունավետությունից՝ շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին ու ՀՀ գործընկերներին՝ կարևորելով վերապատրաստման դասընթացի անհրաժեշտությունը՝ ԱրՊՀ հիմնանորոգված մասնաշենքում ժամանակակից չափանիշներին համահունչ գրադարանային սպասարկում ապահովելու տեսանկյունից:

«Դասընթացները եղել են շատ արդյունավետ և անհրաժեշտ: Հինգ օրերի ընթացքում ձեռք ենք բերել գրադարանային սպասարկման համար անհրաժեշտ և արդիական գիտելիքներ ու հմտություններ, որոնք հաջողությամբ կկիրառենք ԱրՊՀ-ում՝ ԱրՊՀ գրադարանային սպասարկման որակը դարձնելով ժամանակակից պահանջներին համահունչ: ԱրՊՀ և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի ամերիկյան համալսարանին, ՀԱՀ գրադարանի տնօրեն Բելլա Ավագյանին և բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել վերապատրաստման ծրագրի իրականացմանը»,-նշել է ԱրՊՀ գիտական գրադարանի տնօրեն Հասմիկ Հարությունյանը:



# ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ԵՆ ՏՐՎԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ



*Արցախի պետական համալսարանում Genesis Armenia ուղեղային կենտրոն-հիմնադրամի կողմից բացված Կարո Կարապետյանի անվան ադրբեջանագիտության կենտրոնում դասընթացների մասնակից 13 սովորող հաջողությամբ ավարտել են առաջին փուլը և ստացել հավաստագրեր:*

Հավաստագրերի տրման արարողությանը ներկա էին Արցախի Հանրապետության պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, Genesis Armenia հիմնադրամի ներկայացուցիչներ, ԱրՊՀ դասախոսներ:

Genesis Armenia ուղեղային կենտրոն-հիմնադրամի հիմնադիր Աբրահամ Գասպարյանը, շնորհավորելով դասընթացը հաջողությամբ ավարտածներին, նշել է, որ պատերազմից հետո, բացելով կենտրոնը, խնդիր էին դրել կրթության և գիտության միջոցով նպաստել Արցախի վերականգնմանն ու զարգացմանը:

«Անցած տարվա սեպտեմբերին, երբ հանդիպեցինք ԱրՊՀ ռեկտորի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, խնդիր դրեցինք ճանաչել հարևան երկրների լեզուն և ոչ ֆորմալ կրթության միջոցով ուսուցանել ադրբեջանագիտություն: Դիմորդները շատ էին, բայց, քանի որ մենք կարևորում ենք որակը, ընտրեցինք 15 ուսանողի: Երկուսի ուսումնառությունը հենց սկզբից դադարեցրինք՝ նրանց հետևողականության բացակայության պատճառով:

Դասընթացը յուրացրած ուսանողները տիրապետում են նվազագույնը 2500 բառի, քերականությանը, ադրբեջաներենի շարահյուսությանը, ինչպես նաև պատմությանը, քաղաքականությանը և այլն»,-ասել է Ա. Գասպարյանը՝ հավելելով, որ հավաստագրեր ստացած և բարձր առաջադիմություն ցուցաբերած 10 սովորող ադրբեջանագիտության կենտրոնում ուսումնառությունը կշարունակի ևս 8 ամիս: Ավարտին նրանք կստանան դիպլոմներ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ծրագիրն իրականացնող Genesis Armenia ուղեղային կենտրոն-հիմնադրամին՝ կարևորելով ոչ ֆորմալ կրթությունն ու կենտրոնի կողմից անցկացվող դասընթացի նշանակությունը:

# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



*Պատերազմի և համավարակի պատճառով երկամյա դադարից հետո Ստեփանակերտում հուլիսի 11-ին մեկնարկել են Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից անցկացվող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ամենամյա դասընթացները:*

Այս տարի հայտարարված մրցույթում, որպես կազմակերպիչ, հաղթող է ճանաչվել Արցախի պետական համալսարանը, որտեղ էլ հուլիսի 11-ից 16-ը կազմակերպվել են դասընթացները:

ԱՀ ՔԾԽ նախագահի տեղակալ, դասընթացների համակարգող Ջիվան Հարությունյանի խոսքով՝ վերապատրաստմանը մասնակցել են հանրապետության 28 մարմիններից գործուղված 341 քաղծառայող, ձևավորվել են 26 խմբեր և ՔԾԽ-ի կողմից հաստատվել 26 ծրագրեր, որոնք, ըստ մասնագիտական ոլորտների համաձայնեցվել են համապատասխան գերատեսչական մարմինների հետ: